ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

Ի ԼՐՈՒՄՆ ԼՄԱՀ-ԳՀԱԾՁԲ-18/10 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Ալավերդի 03.10.2018թ

Ալավերդու համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Սասուն Խեչումյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռազովալո» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մեսրոպյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկա

1.1 Հիմք ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ համաձայնագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին ավելացնել ԼՄԱՀ-ԳՀԱԾՁԲ-18/10 ծածկագրով պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը 30 օրացուցային օրով:

1.2 Աշխատանքների կատարման նոր վերջնաժամկետ սահմանել 02.11.2018թ.: Հաստատել Պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալների կատարման ժամկետները համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրի մեկնաբանման, իրագործման կամ կիրառման ժամանակ ծագած տարաձայնությունները, ինչպես նաև Համաձայնագրից բխող բոլոր հարցերը լուծվում են երկկողմ բանակցությունների ճանապարհով, համաձայնության չգալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Սույն Համաձայնագիրը գործողության մեջ է մտնում ստորագրման պահից, հանդիսանում է ԼՄԱՀ-ԳՀԱԾՁԲ-18/10 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը և գործում է ժամանակացույցին համապատասխան:

2.3 Պայմանագրի՝ սույն համաձայնագրում չնշված կետերը մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի | «Ռազովալո» ՍՊԸ |
| Զորավար Անդրանիկի 8/1 | Ք. Երևան Պարոնյան 6 |
| Ալավերդու համայնքապետարան | Հայբիզնեսբանկ ՓԲԸ |
| ՀՀ ֆինանսների Նախարարության | Հ/Հ 1150014384450100 |
| Գործառնական Վարչություն | ՀՎՀՀ 05306478 |
| Հ/Հ 900262121107 | Տնօրեն Ա.Մեսրոպյան |
| ՀՎՀՀ 06954208 | |
| Համայնքի ղեկավար Ս.Խեչումյան | |
| ստորագրություն | ստորագրություն |
| | Կ.Տ. |

Հ ա վ ե լ վ ա ծ թ ի վ 1
03.10.2018թ. կ ն ք վ ա ծ հ ա մ ա ձ ա յ ն ա գ ր ի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Ալավերդի համայնքի փողոցների հենապատերի թափված քարերի և գլխաքարերի վերականգնման աշխատանքների ձեռքբերում

| N р/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ալավերդի համայնքի փողոցների հենապատերի թափված քարերի և գլխաքարերի վերականգնման աշխատանքների ձեռքբերում | Պայմանագրի կնքման օրվանից | 02.11. 2018թ |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզ ք. Ալավերդի
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
Հ/Հ 900262121107
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար Ա.Մելքումյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ռազովայր» ՍՊԸ
Ք. Երևան Պարոնյան 6
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150014384450100
ՀՎՀՀ 05306478
Տնօրեն Ա.Մեսրոպյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ